ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. նոյեմբերի 4

թիվ 109 -Ա

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 226-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Պ. Համբարձումյանի 2013 թվականի նոյեմբերի 4-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կայքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Գայանե Գրիգորյանի 2013 թվականի հոկտեմբերի 16-ի և հոկտեմբերի 28-ի բացատրությունները՝ ***կարգադրում եմ.***

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կայքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Գայանե Գրիգորյանին հայտարարել խիստ նկատողություն:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ